ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-------» հոկտեմբերի 2011թ. N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» N258-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերությունում «որը նախատեսում է Երևան 184,8 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում» բառերը փոխարինել «որը նախատեսում է Երևան քաղաքում 210,7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում» բառերով:

2) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի առաջին պարբերության 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Այսինքն, քաղաքապետարանը 2011թ. ՄԱԶԾ-ի տնօրինությանը հատկացնելու է 40,67 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ. 64,68 մլն ՀՀ դրամ գումար և հաշվի առնելով ՄԱԶԾ-ի նույնչափ հատկացումը ծրագրի իրականացման աշխատանքներին՝ 2011թ.-2012թթ կիրականացվի 210,7 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագիր, որից 2011թ. կիրականացվի 68,39 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ.՝ 142.31 մլն ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքներ»:

3) «Ծրագրի նկարագրությունը և բյուջեն» հատվածի 2-րդ պարբերությունում «ինչպես նաև քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ» բառերը փոխարինել՝ «ինչպես նաև քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի, վերանորոգման կարիք ունեցող շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ» բառերով:

4)«Պայմանագրի հիմնական դրույթները» հատվածի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Քաղաքապետարանը ՄԱԶԾ-ի տնօրինությանն է հանձնում 105,35 մլն ՀՀ դրամի հատկացում, իսկ ՄԱԶԾ-ն ծրագրի իրականացման համար կատարում է 105,35 մլն ՀՀ դրամի հատկացում՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցով»:

Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունների համաձայն ծրագրի համաֆինանսավորումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին Երևան քաղաքի ավագանու կողմից 24.06.11թ. N258-Ա ընդունվել է որոշում, որի արդյունքում «Գեղեցիկ Երևան» ծրագրին տրվել է համաձայնություն: Այնուհետև Երևանի Քաղաքապետարանի և ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի միջև ս.թ. հուլիսի 14-ին կնքվել է համաձայնագիր, որի արդյունքում սկիզբ է դրվել «Գեղեցիկ Երևան» ծրագրին: Ծրագիրը նախատեսում է հուշարձանների պատվանդանների և նրանց հարակից տարածքների բարեկարգում և լուսավորում, քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի վերանորոգում, քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի համատեղ ընտրված թաղամասում պիլոտային ծրագրի իրականացում և այլ լրացուցիչ աշխատանքներ:

Ս.թ. հուլիսի 14-ին ՄԱԿ-ի գրասենյակի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ընդլայնել «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակները և ծրագրի մեջ ներառել անբարեկարգ վիճակում գտնվող Ավան վարչական շրջանի վերանորոգման կարիք ունեցող շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները, ապա ս.թ. սեպտեմբերի 19-ի հ.30/01-2111 գրությամբ ներկայացվել է համապատասխան շենքերի ցանկը և ծավալները: ՄԱԶԾ-ի համապատասխան ներկայացուցիչների հետ տեղի ունեցած աշխատանքային քննարկումների արդյունքում ս.թ. սեպտեմբերի 23-ի հ.11/36228 գրությամբ հստակեցվել է շքամուտքերի վերանորոգմանը նախատեսվող գումարը, որը կազմում է 25,9 մլն ՀՀ դրամ՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև կնքված համաֆինանսավորման համաձայնագրի սկզբունքի՝ այն է, գումարի 50%-ը՝ 12,95 մլն ՀՀ դրամը, կհատկացվի ՄԱԶԾ-ի, իսկ մնացած 50%-ը՝ Երևանի քաղաքապետարանի կողմից:

Նշված փոփոխության դեպքում Ավան վարչական շրջանի վերանորոգման կարիք ունեցող շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները Երևանի քաղաքապետարանի համար հնարավոր կլինի իրականացնել ընդամենը 12,95 մլն ՀՀ դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու ավագանու 2011 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2011թ. բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ